


## ՎԵՐՋԱԲԱՆ

Երկրագունդը կենդանի օրգանիզմ է և այն լուրջ հիվանդ է: Հիվանդության ախտանշաններն անհանգստացնող են, քանի որ շատ բուռն են ընթանում՝ երկրաշարժեր, փոթորիկներ, ջրհեղեղներ, համաճարակներ, սով: Այս ամենն ավելի է ահագնանում Երկրի տարբեր շրջաններում տեղի ունեցող ազգամիջյան բախումների ու պատերազմների, տեխնածին աղետների հետևանքով:

Ժողովրդական իմաստությունն ասում է. «Առողջ մարմնում՝ առողջ հոգի»: Այսինքն՝ եթե օրգանիզմն առողջ է, առողջ է նաև նրա հոգին, և հակառակը՝ եթե մարմինը հիվանդ է, ուրեմն հոգին ևս հիվանդ է: Հետևաբար հիվանդ երկրագնդի հոգին, որը կարելի է պատկերացնել իբրև Երկրագնդի բնակչության հոգիների հանրագումար, ևս հիվանդ է: Իսկ ի՞նչ է հոգին: Այս հարցին այսպես է պատասխանել ռուս հայտնի ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովը. *«Ես ուսումնասիրում եմ բարձրագույն նյարդային գործունեությունը և գիտեմ, որ մարդկային բոլոր զգացումները՝ ուրախությունը, վիշտը, զայրույթը, ատելությունը, մարդու մտքերը, մտածելու ու դատելու կարողությունը կապված են միմյանց, իսկ նրանցից յուրաքանչյուրը՝ մարդկային ուղեղի հատուկ բջիջների հետ: Իսկ երբ մարմինը դադարում է ապրել, այդ ժամանակ մարդու բոլոր զգացումներն ու մտքերը կարծես պոկվում են ուղեղի արդեն մեռած բջիջներից և, քանի որ համաձայն բնության*



Պավլով Ի. Պ.

*համընդհանուր օրենքների՝ ո՛չ էներգիան, ո՛չ նյութը անհետ չեն կորչում, կազմում են այն հոգին, անմահ հոգին, որը քարոզում է քրիստոնեական հավատքը»:* Եթե ընդունենք Պավլովի այս բացատրությունը, ուրեմն իսկապես, Երկրագունդը ծանր հիվանդ է, որովհետև մեր մտքերը, հույզերը, ապրումները, որոնք չեն կորչում ու չեն անհետանում, այլ կուտակվում են մթնոլորտի որոշակի շերտում (կարելի է ենթադրել, որ դա նոոսֆերան է), ոչ մի լավ բան չեն խոստանում: Նրանցում գնալով պակասում են սերն ու ներողամտությունը, լավատեսությունն ու հավատը ապագայի նկատմամբ: Մարդկանց հոգեբանության մեջ գերակշռող են դառնում թշնամանքը, նախանձը, ագահությունը, ուրիշներին կեղեքելու գնով հարստություն դիզելու տենչը, թույլերին ոչնչացնելու և աշխարհին տիրելու մարմաջը:

Օրգանիզմը երկարատև հիվանդությունից հետո սկսում է ապաքինվել, երբ հիվանդը լավատեսորեն է տրամադրվում, իրենից վանում տխուր մտքերը, լցվում հավատով, այսինքն՝ նախ սկսում է առողջանալ նրա հոգին, հետո՝ մարմինը:

Ուրեմն, եթե ուզում ենք խուսափել Երկրագնդի էկոլոգիական գլոբալ աղետներից, վերականգնել մեր նկատմամբ բնության երբեմնի բարյացակամ վերաբերմունքը, նախ պետք է փոխենք մեր վերաբերմունքը նրա նկատմամբ: Իսկ դա նշանակում է, որ բոլորը պետք է հասկանան, որ Երկրագունդը նույնպես կենդանի օրգանիզմ է՝ իր ֆիզիոլոգիայով և հոգեբանությամբ, ուստի նրան պետք է վերաբերվել մեծագույն հարգանքով, հոգատարությամբ ու երկյուղածությամբ: Ահա նման գաղափարներ է հարկավոր սերմանել մատաղ սերնդի մեջ ընտանիքում, մանկապարտեզում, դպրոցում:

Պետք է մանուկ հասակից սովորեցնել հոգու էկոլոգիայի այբուբենը, երեխաներին սովորեցնել սիրել միմյանց և բոլորին, նրանց դաստիարակել համամարդկային բարոյական արժեքներով, ներշնչել բարու ու գեղեցիկի վեհ զգացումներ, քանի որ «գեղեցիկը կփրկի աշխարհը»:

Մեր շուրջը տիրող էկոլոգիական տխուր վիճակը՝ հատված անտառներ, անապատացած հողեր, անբարեկարգ ճանապարհներ, լքված բնակավայրեր, համատարած աղբակույտեր և այլն,

մեր հոգու ավերված էկոլոգիայի արտացոլումն է նյութական աշխարհում: Առանց մեկնաբանությունների էլ պարզ է, թե ինչու է հոգևոր հաստատությունների՝ եկեղեցիների, մենաստանների շրջակայքում աչք շոյում խիստ կարգուկանոնը, մաքրությունը, ճարտարապետական կառույցների ու բնության ներդաշնակությունը: Մարդիկ հանգստություն ու խաղաղություն են զգում այդ վայրերում: Ուրեմն մեզ շրջապատող միջավայրի անհարմարություններից ազատվելու համար նախ պետք է մաքրենք մեր ներքին միջավայրը, մեր հոգին, կարողանանք կառավարել մեր մտքերն ու հույզերը, չափավորենք մեր պահանջմունքներն ու ապրենք ներդաշնակության մեջ նախ ինքներս մեզ հետ, հետո շրջապատի մարդկանց ու բնության հետ:

Ալբերտ էյնշտեյնը մի առիթով ասել է. *«Ազատված ատոմը փոխեց ամեն ինչ, բացի մեր մտածողությունից: Արդեն ժամանակն է այն փոխելու: Բնության նկատմամբ անհրաժեշտ են նոր մոտեցումներ, նոր էթիկա: Ոչ թե պայքարել բնության դեմ, այլ խնայել այն՝ սա է մեր խնդիրը»<sup>1</sup>:*

Մարդը վերջապես պետք է հասկանա, որ բնությունը իր ձեռքի գործը չէ, որ նա իրավունք չունի և չպետք է նրա հետ վարվի ինչպես որ ուզում է՝ անընդհատ խախտելով նրա օրենքները, միջամտելով նրա բնականոն ընթացքին, անտեսելով կամ չգիտակցելով դրա հետևանքները: Իսկ այդ հետևանքները կարող են կործանարար լինել ոչ միայն մարդու, այլև բնության, Տիեզերքի համար ընդհանրապես: Մարդը պետք է հասկանա, որ ինքը ոչ թե Տիեզերքի տերն է, այլ նրա ընդամենը մի մասնիկը, որը նրան հորդորում է ենթարկվել իր օրենքներին:

1992 թ. նոյեմբերին մամուլում հրապարակվեց մի փաստաթուղթ՝ «Աշխարհի գիտնականների նախագուշացումը մարդկությանը» վերնագրով: Աշխարհի 71 երկրներից 1600 առաջատար գիտնականների ստորագրությամբ այդ փաստաթղթում ասվում էր. *«Մարդկային հասարակությունը և բնությունը մտել են հակասության մեջ: Մարդկության գործունեությունը շրջակա միջավայրին հասցնում է ահռելի, երբեմն էլ անուղղելի վնաս: Եթե մեր ամենօրյա գործողությունների մեծ մասը հսկողության տակ չվերցնենք, ապա դրանք լուրջ վտանգի տակ կդնեն այն ապագան, որը մենք ցանկանում ենք մարդկային հասարակությանը, բուսական և կենդանական թագավորություններին, և կարող ենք կենդանի աշխարհն այնպես փոխել, որ այն ի վիճակի չի լինի պահպանել կյանքն այն տեսքով, ինչպես մենք այն գիտենք: Անհրաժեշտ են հրատապ արմատական փոփոխություններ, եթե ուզում ենք խուսափել բախումներից, որին կարող է հանգեցնել մեր բռնած ուղղությունը...»<sup>2</sup>:*

Այս նախագուշացնող փաստաթղթում թվարկված են առավել ճգնաժամային իրավիճակները՝ ջրերի, օվկիանոսների, մթնոլորտի, հողի աղտոտումը, բույսերի ու կենդանիների անհետացումը և մարդկանցով մոլորակի գերբնակեցումը: Խստորեն հայտարարվում է. *«Մնացել է մի քանի տասնամյակից ոչ ավելի, երբ մենք կկորցնենք վտանգը դիմակայելու հնարավորությունը, և մարդկության հեռանկարը անասելի կվտանգվի: Անհրաժեշտ են կտրուկ միջոցներ, եթե ուզում ենք խուսափել մարդկային տառապանքներից և մեր տուճ-մոլորակի կործանման վտանգից»:*

Թվում է՝ այս ահագանգը պետք է սթափեցներ աշխարհի «հզորներին», ստիպեր անհապաղ միջոցներ ձեռնարկել սպասվող աղետի դեմն արձեղնելու համար: Սակայն, ավա՜ղ, ինչպես հատում էին, այնպես էլ շարունակում են հատել անտառները, ինչպես կեղտոտում էին, այնպես էլ շարունակում են կեղտոտել մթնոլորտը, հողը, ջուրը...:

Միգուցե ճիշտ է պրոֆեսոր Լ. Վ. Լեսկովը՝ պնդելով, որ մարդը կենսոլորտի մակաբույծն է: *«Մարդիկ պետք է գիտակցեն, որ եթե որևէ միջավայրում մակաբուծող տեսակը էվոլյուցիայի*

<sup>1</sup> Агаджанян Н. А. Мы разум природы. Мед. Газета. № 2, 1989.

<sup>2</sup> Друнвало М. Древняя тайна цветка жизни. т. 1, Киев, София, 2000, стр. 84.

*ընթացքում չի հարմարվում այդ միջավայրին, ապա վերջին հաշվով երկուսն էլ ոչնչանում են»<sup>3</sup>*: Իսկ մարդը փորձում է միջավայրը հարմարեցնել իրեն՝ խախտելով նրա հավասարակշռությունը: Մակաբույծի գոյության սկզբունքն է՝ «ապրիր ինքդ և թույլ տուր ապրեն մյուսները», քանի որ այն «գիտակցում է», որ եթե մահացու վնաս հասցնի տիրոջը, որի հաշվին ինքն ապրում է, ապա կոչնչանա ինքը ևս: Իսկ մարդը իր միջավայրը ոչնչացնում է՝ չգիտակցելով դրա հետևանքները:

Ժամանակակից գիտությունը դժվարությամբ է ընդունում, որ Տիեզերքը օժտված է Բարձրագույն էթիկական նորմերով, որոնցից պետք է սնվեն մարդկային բարոյագիտական օրենքները: Առանց այդ Բարձրագույն օրենքների իմացության անհնար է լուծել մոլորակին պատուհասած էկոլոգիական ճգնաժամը: Ահա թե ինչու, երբ պետությունները ձգտում են ստեղծել առողջ կրթական, առողջապահական, սոցիալական, տնտեսական և այլ համակարգեր, դա նրանց չի հաջողվում, քանի որ մարդու կրթության, առողջության, սոցիալական և տնտեսական կյանքի իրական գիտելիքները և օրենքները պետք է փնտրել ոչ թե տեսանելի նյութի այլ տիեզերական կյանքի օրենքների մեջ: Ահա թե ինչու, երբ պետությունները ձգտում են համերաշխության հասնել, մեր տուն-մոլորակը խնամել ու մաքրել, պատերազմների վերջ տալ, դա նրանց չի հաջողվում, որովհետև այդ պետականությունները սնվում են օգտապաշտության և եսապաշտության օրենքներից, և նրանց անժամոթ է մնում տիեզերական օրենսգիրքը:

Ի՞նչ անել: Ելքը մեկն է: Պետք է դաստիարակել գլոբալ էկոլոգիական մտածողությամբ սերունդ, որին հասու կլինի տիեզերական օրենքների իմացությունը: Դա պետք է սկսել հենց այսօր: Պետք է սկսել բուհից, որ վաղվա գիտնականը, մանկավարժը, ծնողը կարողանա ինքը կրթել առողջ մտածողությամբ սերունդ: Պետք է սկսել դպրոցից, որ կյանք մտնող պատանին գոնե տարրական գիտելիքներ ունենա իրեն շրջապատող աշխարհի մասին: Պետք է սկսել մսուր-մանկապարտեզից, որպեսզի բնության ու Տիեզերքի նկատմամբ հոգատար վերաբերմունքը՝ Տիեզերքի էթիկան ներարկվի երեխաների մեջ, քանի դեռ նրանցում չի ամրապնդվել սոսկ սպառողի հոգեբանությունը:

Կարևորելով սերնդի դաստիարակության խնդիրը՝ ակադեմիկոս Ն.Ա. Աղաջանյանը գրում է. «Չամարյա կես դար շփվելով մտավորականության տարբեր ներկայացուցիչների հետ, գտնվելով, կարծես թե, ամենաառաջավոր ակադեմիական և կիրառական գիտության ոլորտում՝ եկել են այն հաստատ համոզման, որ մարդու անընդհատ ու բազմակողմանի զարգացման ու նրա գիտելիքների կատարելագործման հիմնական նպատակը պետք է լինի ոչ թե բարձրագույն կրթությամբ հերթական մասնագետի պատրաստումը, այլ նրա մեջ ներդաշնակ անձնավորության դաստիարակումը»<sup>4</sup>: Իսկ դա ենթադրում է նախ յուրաքանչյուր մարդու մարմնի և հոգու ներդաշնակություն, որը կհանգեցնի նրա ներքին խաղաղությանը, իսկ դրանից արդեն կբխի նրա ներդաշնակությունը շրջապատի մարդկանց հետ, շրջապատող բնական միջավայրի, Տիեզերքի հետ: Այդ ներդաշնակությունը հզոր ստեղծարար ուժ է, որն իր շուրջը միայն սեր ու բարիք է սփռում ու տարաբնույթ ճգնաժամներից խուսափելու իրական երաշխիք է: Դրա համար է ասվում. **«Սիրեցե՛ք միմյանց, քանզի Աստված Սեր է»:**



Բովանդակություն

<sup>3</sup> Лесков Л. В. О разуме пустоты и о нашем бессмертии. // Наука и религия. № 9, 1995, № 35.  
<sup>4</sup> Агаджанян Н. А. Штрихи о времени и о себе. Москва, 1999.